**«11001.ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 2021 Թ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3**

**28 դեկեմբերի 2020թ.** **ք. Երևան**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.11.2020թ. N1663-Ա/2 հրամանով ստեղծված հանձնաժողովը դեկտեմբերի 25-ին գումարել է հանձնաժողովի առաջին նիստ՝ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N1937-Ն որոշման Հավելվածի 19-րդ կետի համաձայն,

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի՝ «1193.Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի «11001.Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» գործողության շրջանակում դրամաշնորհի հատկացման մրցույթին ներկայացրած կազմակերպության հայտը գնահատելու նպատակով:

**Մասնակցում էին՝**

Նախագահ՝ Ժաննա Անդրեասյան

Անդամներ՝ Սուսաննա Ազատյան

Ռոզա Հարությունյան

Հասմիկ Մանուկյան

Արաքսիա Սվաջյան

Քարտուղար Անահիտ Մուրադյան

**Բացակա՝**

Թամարա Գյոզալյան

Արմինե Օհանյան

**Օրակարգ**

1.Մրցույթին ներկայացրած «Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության հայտի ուսումնասիրություն և դրամաշնորհի հատկացման արդյունքների գնահատում:

2.Մրցույթի արդյունքների ամփոփում, հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա:

Հանձնաժողովի անդամները ներկայացրեցին իրենց կողմից գնահատված գնահատման թերթիկները:

Մրցույթի արդյունքներն ամփոփվեցին հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա:

Հանձնաժողովի ներկա թվով հինգ անդամների գնահատման թերթիկների ընդհանուր գնահատականը կազմեց՝ 560 միավոր:

Հանձնաժողովի քարտուղար Ա. Մուրադյանը խնդրեց կատարել հայտերի գնահատման քվեարկություն:

**ՈՐՈՇԵՑԻՆ**

**5 կողմ, 0 դեմ ձայնով**

ՀՀ պետական բյուջեի «1193.Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի «11001.Մանկավարժահոգեբանական աջակցության

ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ»-ի **շրջանակում դրամաշնորհի հատկացման մրցույթում հաղթող ճանաչել** «Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունը:

**Նախագահ՝** **Ժ. Անդրեասյան**

**Անդամներ՝** **Ս. Ազատյան**

**Ռ. Հարությունյան**

**Հ. Մանուկյան**

**Ա. Սվաջյան**

**Քարտուղար՝** **Ա. Մուրադյան**